ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 586-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2022 թվականի N _____- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 586-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի դ) ենթակետով պահանջներով՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. 1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի ««Գնահատման և թեստավորմանկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 586-Ն որոշման հավելվածում (այսուհետև՝ Որոշման հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

- Որոշման հավելվածի 14-րդ կետում «ի դեմս տնօրենի» բառերից հետո դրված «,» ստորակետ կետադրական նշանը և դրանցից հետո գրված «և կոլեգիալ կառավարման մարմինը՝ ի դեմս խորհրդի։» բառերը հանել։
- Որոշման հավելվածի 16-րդ կետի ժզ) ենթակետում «նկարագրությունը» բառից հետո դնել «,» ստորակետ կետադրական նշանը և լրացնել «հաստատում է կազմակերպության գործադիր մարմնի հետ կնքվելիք

աշխատանքային պայմանագիրը, վաղաժամկետ դադարեցնում նրա լիազորությունները, սահմանում է գործադիր մարմնի վարձատրության կարգն ու պայմանները.» բառերով:

- Որոշման հավելվածի 16-րդ կետը լրացնել նոր ժը), ժթ), ի), իա) և իբ) ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

ժը) կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր գործադիր մարմնի նկատմամբ.

ժթ) սահմանում է կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունները.

ի) հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը.

իա) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվապահական և ընթացիկ գործունեության մասին հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

իբ) ընդունում է որոշում կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին:»:

- Որոշման հավելվածի 17-րդ կետը լրացնել նոր ժբ), ժգ), ժդ), ժե) և ժզ) ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

ժբ) լիազորված պետական կառավարման մարմին ներկայացնում է կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ՝ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված՝ կազմակերպության գործունեության բնագավառին, առարկային և նպատակներին համապատասխան.

ժգ) հաստատում է կազմակերպության գործունեության տարեկան պլանը և դրա կատարման ժամկետները.

ժդ) հաստատում է կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը.

ժե) հաստատում է կազմակերպության ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ.

ժզ) լիազորված պետական մարմին է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագիծը:»:

- Որոշման հավելվածի 19-30-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 586-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

1. **Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 586-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ ԳԹԿ) ենթակայության փոփոխության և նրանց կողմից իրականացվող աշխատանքները ժամանակին և համակարգված իրականացնելու անհրաժեշտությամբ**:**

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը մինչև 2019 թվականը եղել է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ենթակայության, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի № 1469-Ն որոշմամբ ԳԹԿ-ն գործում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ: ԳԹԿ-ի գործունեության առարկան կրթական հաստատությունների սովորողների և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման իրականացումն է:

ԳԹԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը եղել է խորհուրդը, որի անհատական կազմը հաստատված է Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 1-ի № 52-Ա հրամանով: Կազմում ընդգրկված անդամների կեսից ավելին չեն զբաղեցնում հրամանում նշված պաշտոնները, ինչից ելնելով ԳԹԿ-ն խորհրդի նիստեր հրավիրել չի կարողանում և ընթացկ աշխատանքներում առաջացել են մի շարք դժվարություններ: Բացի այդ, խորհրդի լիազորությունները մասամբ կրկնում են լիազոր մարմնի և տնօրենի լիազորությունները: Աշխատանքները համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է որոշումները կայացվի տնօրենի կողմից, իսկ մնացած մասով կիրականացնի լիազոր մարմինը: Հատկապես քննությունների կազմակերպման և անցկացման շրջանում աշխատանքները ժամանակին

կազմակերպելու համար նպատակահարմար չի խորհրդի նիստեր հրավիրել և քննարկել:

Ամփոփելով վերը շարադրվածը և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, հիմնադրը կարող է որոշում ընդունել, որ կազմակերպությունը իր գործունեությունը կազմակերպի առանց կոլեգիալ կառավարման խորհրդի:

3. **Կարգավորման նպատակը.**

Նախագծով ներկայացվող առաջարկությամբ նախ և առաջ աշխատանքները կկազմակերպվեն ճիշտ ժամանակին և համակարգված, իսկ գործընթացներն իրականացնելիս ընթացիկ աշխատանքները կկազմակերպվեն հնարավորինս ավելի պարզ:

4. **Ակնկալվող արդյունքը.**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 586-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ ԳԹԿ-ն կկարողանա իր կանոնադրությամբ սահմանված խնդիրներն ու նպատակներն իրականացնել ավելի համակարգված, արդյունավետ և ժամանակին:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 586-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

5. **«Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ»**.

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 586-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը չի բխում վերը նշված ռազմավարական փաստաթղթերից:

6.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: